


Ն. Կ. ԱՆՏԻՐՈՎ

ԳԻՉԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ  
ՍԻՍԵՄԻ ՀԱՄԱՐ



6 8 2 0 0 8  
1 9 3 4

25 OCT 2010

1796  
A-62

Ն. Կ. ԱՆՏԻՊՈՎ

ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ  
ՍԻՍՏԵՄԻ ՀԱՄԱՐ

32061

Թարգմ. Հ. ԱՐԱԲՈՋԱՆ

4/4/10  
ԿԱՅՈ



1984

12 FEB 2013

8619

000 00 25

Հեղական խմբ՝ Հ. Պետրոսյան  
Տեխ. խմբագիր՝ Գ. Զեթյան  
Սրբագրիչ՝ Ռ. Նշանակ

I

Վերջին ժամանակաշրջանում Փիզիկուլտ  
շարժումը Խորհրդային Միության մեջ մեծ  
թափ ստացավ՝ ընդգրկելով աշխատավորա-  
կան լայն մասսաներին։ Պրոլետարիատի դիկ-  
տատուրայի յերկրում, Փիզիկուլտուրայի շարժ-  
ման հզոր զարգացումն անխղելիորեն կապված  
է յերկրի սոցիալիստական վերակառուցման  
հզորագույն հաջողությունների հետ, վորոնք  
հանդես են բերում բանվոր դասակարգի կուլ-  
տուրական աճ ու աշխատավորության կյանքի  
նյութական-կենցաղային մակարդակի սիստե-  
մատիկ բարձրացում։

Մեր կուսակցության գլխավոր գծի հի-  
ման վրա, ճշտորեն կենսագործելով Փիզիկուլ-  
տուրային աշխատանքների վերակառուցման  
մասին Համ Կ(բ)Կ կենտկոմի վորոշումները  
(1929 թ.), Փիզիկուլտ շարժումը հասել է բարձր  
զարգացման։ Այս ժամանակամիջոցում Փի-  
զիկական կուլտուրայի Համամիութենական  
Խորհրդը մշակել է Փիզիկուլտ շարժման հիմ-  
նական դրույթները, և մենք այժմ ունենք Փի-  
զիկական կուլտուրայի մեր՝ պրոլետարական  
սիստեմը։

Պետական սպառան

Տիպահան 8640

Հրատ. 3073

Պատկեր 1178

Տիպահան 2000

Նախ քան մեր՝ խորհրդային Փիզկուլտուրայի վերլուծմանն անցնելը հարկ ենք համարում կանգ առնել Փիզկուլտուրայի բուն եյության, նրա բովանդակության վրա:

Բոլորիս հայտնի յե, վոր Փիզիկական կուլտուրայի խնդիրն ե մարդու Փիզիկական դարձացումը: Նրա մեջ ուժի, ճարպկության, տոկության և վոչ պակաս գնահատելի այլ հատկությունների մշակումը:

Միանգամայն անվիճելի յե, վոր այդ հատկությունների մշակման համար անհրաժեշտ ե կիրառել Փիզիկական վարժությունների մեթոդները, ինչպես նաև ոգտագործել բնության բնական ուժերը—արեւ, ողը և ջուրը: Այս անվիճելի տեսակետների հիման վրա բուրժուական գիտնականները կաշվից դուրս են գալիս ապացուցելու, վոր կապիտալիստական հաստրակարգում Փիզիկական կուլտուրայի խնդիրն ե բացառապես մարդկության առողջացումը, հանգիստը, զվարճությունը և այլ՝ չհետապնդելով քաղաքական և վոչ մի նպատակ: Կապիտալիզմի ջատագովների այս տեսակետը հաստատվում ե բուրժուական Փիզկուլտուրային կազմակերպություններում իբր թե գոյություն ունեցող հավասարության սկզբունքով, վորի համաձայն Փիզկուլտուրայի մեջ ներդրավում են այդ ասպարիզում ամենից ավելի ընդունակները,

անկախ նրանց սոցիալական դրությունից և այլն:

Փիզկուլտուրայի փաստական վիճակը կապիտալիստական յերկրներում՝ նրա ապաքաղաքականության լավագույն հերքումն ե հանգիստանում:

Դասակարգային այն սուր պայքարը, վորն արտացոլում ե նաև Փիզկուլտուրայի ուսպորտի մեջ, ամենայն ակներևությամբ համոզում ե մեզ, վոր Փիզիկական կուլտուրան բուրժուովին ել ապադասակարգային մի կատեգորիա չե:

Ամբողջ աշխարհում գոյության ունեցող Փիզկուլտուրային ու սպորտային կազմակերպությունների բաժանումը միջազգային յերեք միությունների (բուրժուական կազմակերպությունները միացած են Ոլիմպիական կոմիտեյում, համաձայնողական ու ոԵֆորմիստական սպորտային միությունները՝ Լյուցերնի սպորտային ինտերնացիոնալում—ԿՍԻ-ում)՝ լավագույն ցուցանիշն ե Փիզկուլտուրային կազմակերպությունների դասակարգային բնույթի: Փաստորեն գոյություն ունի յերկու բանակ՝ բուրժուական և պրոլետարական. քանի վոր գեղին սպորտի կազմակերպությունները գտնվելով սոցիալ Փաշխտների ղեկավարության տակ՝ հանդիսանում են բուրժուական կազմակերպությունների կցորդը:

Ոգտվելով բանվոր դասակարգի մեջ հեղա-

ժոխական տրամադրությունները խեղղելու  
բազմապիսի մեթոդներով, վոչ մի միջոց  
չխնայելով բանվոր դասակարգին հեռու պա-  
հելու հեղափոխությունից, լրացած բուրժու-  
ազիան, բայցի վտաշիկանական կոպիտ ուժից,  
ոգտագործում ենակ Փիզկուլտուրան, վոր-  
պեսզի ստեղծե իր կողմից հովանավորվող  
կազմակերպությունները:

Մասսայական այդ կազմակերպություն-  
ները հաճախ բազկացած լինելով քաղաքակա-  
նությունից վոչ այնքան բանիմաց մարդկան-  
ցից՝ բուրժուազիայի նուրբ խաղի հետեւան-  
քով դառնում են վերջինիս համար մի նոր մի-  
ջոց՝ բանվոր դասակարգի դեմ մզվող պայքա-  
րում:

Ֆիզկուլտուրային կազմակերպություննե-  
րի միջոցով բուրժուազիան արտադրային  
կարգով ռեզերվ ե պատրաստում պատերազմի  
համար, ստեղծում ե Փաշխոտական բնույթի իր  
մարտական կազմակերպությունները, սրանց  
մեջ Փիզկուլտուրային պարապմունքների մի-  
ջոցով նախապատրաստում ու կոփում իր  
մարդկանց, վորոնք պատրաստ են առաջին իսկ  
ազդանշանին ջախջախելու և գնդակահարելու  
բանվորներին: Ֆարբիկ-գործարանային սպորտ  
կազմակերպությունների միջոցով ևս նա  
ստեղծում ե իրեն յենթակա մարդկանց կա-  
դրեր՝ ոգտագործելով նրանց վորպես շտրեյկ-

բրեխերներ, վորոնք դավաճանում են բանվո-  
րական հեղափոխական շարժմանը:

Բուրժուազիան ներգրավելով բանվորնե-  
րին իր սպորտային կազմակերպությունների  
մեջ՝ հեռացնում ե նրանց պրոլետարական,  
դասակարգային պայքարից և թուլացնում  
պրոլետարիատի ուժը: Ֆիզկուլտուրային կազ-  
մակերպությունների «ասպարազաքական» լի-  
նելու լոգունգը, վոր ցուցաբերվում ե բուր-  
ժուազիայի կողմից, հանդիսանում ե խարեռու-  
թյուն բանվորական մասսաներին, քանի վոր  
բանվորների կողմից ապաքաղաքականու-  
թյուն՝ նշանակում ե դավաճանություն սեփա-  
կան դասակարգին:

Կարելի յե բերել շտրեյկբրեխերների և  
վոստիկանության ու ժանդարմերիայի ոգնա-  
կանների դերում բուրժուական սպորտ կազ-  
մակերպությունների անդամների յելույթների  
անհաշիվ փաստեր՝ հեղափոխական պրոլետա-  
րիատի դեմ մզվող պայքարից: Դեռ ավելին,  
բուրժուական սպորտի առաջնորդներն իրենց  
յելույթներում այլևս չեն աշխատում թագցը-  
նել, վոր Փիզկուլտուրային շարժումն ոգտա-  
գործվում ե իրենց կողմից վորպես բուրժուա-  
զիայի մարտական մի ջոկատ: Իրենց եյու-  
թյամբ բուրժուականից վոչնչով չեն տարբեր-  
վում մոցիալ-դեմոկրատների Փիզկուլտուրա-  
յին կազմակերպությունները: Իրենց սպորտ  
կազմակերպությունների միջազգային ընույթի

մասին տարվող խոսակցություններով սոցիալ-դեմոկրատներն աշխատում են քողարկել կապիտալիստական շահագործումը։ Դասակարգային խաղաղություն քարոզելով նրանք գործնականում նպաստում են բուրժուազիային՝ պրոլետարիատի հեղափոխական շարքերը ջախջախելու գործում։ Գերմանիայի փորձերից մենք տեսնում ենք, թե ինչպես սպորտի սոցիալ-դեմոկրատական առաջնորդները, զենաթափ արին մասսաներին ֆաշիզմի դեմ մըդվող պայքարում և Փաշխտների առաջին իսկ հարվածից ծունկ չոքեցին նրանց առաջ։ Նրանք մի նամակով դիմեցին ֆաշիստական իշխանություններին՝ պատրաստակամություն հայտնելով իրենց կազմակերպությունները յենթարկել ֆաշիզմի ռեժիմին։

Սակայն հետաքրքիր ե իմանալ, թե վորոնք են բուրժուական ֆիզկուլտ աշխատանքների մեթոդները։ Մեզնում հաճախ կարելի յե հանդիպել բուրժուական ֆիզկուլտուրայի մեթոդների վերաբերյալ բավական մակերեսային հասկացողության։ Այսպես, միանգամայն հեշտ չե այն տեսակետը, վոր իրը բուրժուազիան զբաղվում ե միմիայն սպորտով, որտեղաւատականությամբ, այսուղից բղխող ձըդտումներով դեպի ռեկորդները, պրոֆեսիոնալիզմը և այլն։ Ընդհակառակը, բուրժուազիան աշխատում է ոգտագործել բոլոր մեթոդները, կազմակերպչական բոլոր ձևերը, ներգործելու

բոլոր միջոցները, վորպեսզի սրանց միջոցով կարողանան յենթարկել մարդկանց իր ազգեցությանն և իշխել նրանց վրա։ Բուրժուազիան վոչ մի ճիգ չի խնայում, վորպեսզի իր բանակի շարքերում ու իր գասակարգային Փաշխտական կազմակերպություններում կարողանա ձեռք բերել Փիզիկական բազմակողմանի գարգացում, վորպեսզի մարդկանց կարողանա դարձնել ավելի տոկուն և ավելի հարմարեցված իմպերիալիստական պատերազմների ու դասակարգային պայքարի համար։

Ֆիզիկական բազմակողմանի գարգացումն արմատացնելով՝ բուրժուազիան միաժամանակ տանում ե Փիզկուլտ կազմակերպությունների մեջ իր գաղափարախոսական աշխատանքը։ Թագնվում ե դասակարգային դեմքը, ցուցադրվում են «համապետական», «համաժողովրդական» շահեր, «ազգային հպարտություն», «ազգային արժանապատվություն», «Փիզիկական առողջացում», և այս ցուցանակների տակ պատրաստում վոչ միայն Փիզիկապես բազմակողմանիորեն զարգացած մարդայիկ կապիտալիստական հասարակության և առաջին հերթին իր պետության համար բարեհույս պաշտպան։

Մասսաների մեջ Փիզիկական բազմակողմանի զարգացման գաղափարներն արմատացնելու միջոցներից մեկը հանդիսանում է բուրժուազիան կազմակերպությունների կող-

մից կիրառվող խրախուսանքը, թեկուզ և  
մարմնամարագկան ու սպորտիվ կրծքանշան-  
ների և ձեռվլ: Գերմանիայում կա յերեք աս-  
տիճանի կրծքանշան՝ բրոնզից, արծաթից և  
վոսկուց: կրծքանշան ստանալու համար քըն-  
նություններ կատարվում են ըստ հինգ խմբե-  
րի—սրտի, թոքերի, մկանային, ուժի, ֆիզի-  
կական ընդհանուր զարգացման, ինչպես նաև  
արագության տոկնության: Սպորտային կրծ-  
քանշաններ կան նաև Շվեյցիայում և բուրժու-  
ական այլ յերկրներում:

Բուրժուազիան սպորտին հատկապես մեծ  
ուշադրություն է դարձնում: Նա հսկայական  
զումարներ ե ծախսում հրաշագեղ ստաղիոն-  
ների շինարարության, տոների կազմակերպ-  
ման և այլ նպատակների համար: Շոայլաբար  
պարզեատրելով հաղթողներին, ճոխ ու փար-  
թամ ցուցադրելով սպորտի մրցումները՝ բուր-  
ժուազիան ըստ ամենայնի ժողովրդականա-  
ցնում ե սպորտը:

Բուրժուազիան չեմպիոնների կուլտը կա-  
տարելագործման ե հասցել: Հաղթողին  
փառք ու պատիվ մատուցելով՝ քողարկվում ե  
այն խսկական նպատակը, վորին ցանկանում ե  
հասնել բուրժուազիան Փիզիուլուրային կաղ-  
մակերպությունների միջոցով:

Կապիտալիստական հասարակարգում Փի-  
զիկական կուլտուրայի միջոցով՝ աշխատավո-  
րության առողջացման լոգունզն ամբողջովին  
յերկերեսանիություն ե: Այդ խաթերայությու-

նը մերկացրել են դեռևս գիտական մարքսիզմի  
հիմնադիրները:

«Կապիտալ»-ի 1-ին հատորում Մարքսը  
հետեւյալ կերպ ե բնորոշում կապիտալիզմի  
հարաբերությունն աշխատավորության ա-  
ռողջացման նկատմամբ.

— «Բանվորն իր ամբողջ կյանքում,  
առանց բացառության, վոչ այլ ինչ ե յե-  
թե վոչ միմիայն բանվորական ույժ, ուս-  
տի և այն ամբողջ ժամանակը, վոր նրա  
տրամադրության տակ ե, բնականաբար և  
իրավամբ ներկայացնում ե բանվորական  
ժամանակ, և հետեւապես ամբողջու-  
թյամբ պետք ե մտնի կապիտալի ինքնաճ-  
ման պրոցեսի մեջ: Ինչ վերաբերում ե այն  
ժամանակին, վորն անհրաժեշտ ե մարդ-  
կության մտավոր զարգացման համար,  
սոցիալական Փունկցիաների կատարման,  
ընկերական շիման, ազատ խաղի, Փիզի-  
կական կամ մտավոր ուժերի համար...  
այդ բոլորը դատարկ բաներ են: Հավելյալ  
աշխատանքի հանգեց ունեցած իր գայլի  
ագահությամբ կապիտալը չուռ և տալիս  
բանվորական որվա վոչ միայն բարոյա-  
խոսական, այլ և զուտ Փիզիկական մաք-  
սիմալ սահմանները: Նա հափշտակում ե  
այն ժամանակը, վորն անհրաժեշտ ե աճ-  
ման, զարգացման և մարմնի առողջու-  
թյունը պահպանելու համար: Նա կողոպ-

տում ե այն ժամանակը, վորն անհրաժեշտ ե ող արեի լույս ծծելու համար։ Այսպիսով կապիտալիստական արտադրությունը վոչ միայն գեպի կործանում, և տանում ժարդկային բանվորական ուժը, վորից խղլում են զարգացման և դործունեության նորմալ ու ֆիզիկական պայմանները, այլև տանում ե գեպի վաղաժամ հյուծում և վոչնչացնում»<sup>1)</sup>։ Այսպիսի հետեւթյուն մենք գտնում ենք նաև Ենգելսի մոտ, «Անդի Դյուրինդ»-ում։

«Աշխատանքի բաժանումով մասերի բաժանվեց և ինքը՝ մարդը։ Նրա վորեե գործունեյությունը զարգացնելու նպատակով զոհարերվեցին Փիզիկական ու հոգեոր բոլոր այլ հատկությունները։ Մարդու այս մանրացումն աճում է աշխատանքի բաժանման հետ միաժամանակ, վորն իր բարձր աստիճանին և հասնում մանուֆակտուրայում. . . Խոշոր ինդուստրիայի մեքենացումը բանվորին մեքենայի դարձնում է մեքենայի հասարակ մի կցորդ»<sup>2)</sup>։

Սոցիալիզմի ուսուցիչների արած այս հետեւթյունը ամբողջովին հաստատված է կապիտալիստական զարգացման վողջ ընթացքում

<sup>1)</sup> «Կապիտալ», հատոր I, գլուխ 8.

<sup>2)</sup> «Անտի-դյուրինդ» 211 էջ, 1932 թ. հրատ.։

և հատկապես ակներև կերպով հաստատվում է այժմ, յերբ կապիտալիստական աշխարհում տիրող ամենախոր ճգնաժամի հետեւանքով չտեսնված գործազրկություն ե տիրում։ Բացեիրաց գոյություն ունի պրոլետարների մի հսկա բանակ՝ զրկված գոյությունը պահպանելու բոլոր միջոցներից։ Սակայն աշխատողներն ել սրանցից ավելի նախանձելի պայմաններում չեն գտնվում։ Ուստի բուրժուազիայի խոսակցություններն աշխատավորությանը Փիզիկուլտուրայի միջոցով առողջացնելու մասին, այն աշխատավորությանը, վորն ստիպված է ապրել կիսաքաղց, աշխատել գարշելի պայմաններում, յերբ նա մտածում է վոչ թե Փիզիկուլտուրայի, այլ քաղցից չմեռնելու մասին, —ուղղակի ծաղրի յեն նման։

Այսպիսով ինչպես բուրժուական, նույնպես և համաձայնողական Փիզիկուլտուրային կազմակերպությունները կապիտալիստական հասարակարգում հանդիսանում են զեկավար դասակարգերի վարչական մեխանիզմի անբաժան մասը, վորի նպատակն է ուժեղացնել աշխատավորության շահագործումը և խեղդել հեղափոխական շարժումը։

## II

Միանգամայն այլ վիճակում է դանվում Փիզիկական կուլտուրան ԽՍՀՄ-ում։ Խորդային Միության մեջ Փիզիկական կուլտուրա-

յի նպատակն ե ծառայել աշխատավորության գործին։ Կոմունիստական կուսակցության և էշխանության վողջ քաղաքականությունն ուղղված ե հասարակությունը նոր ձեմով վերակառուցելուն, աշխատանքի, կենցաղի և կուլտուրայի նոր պայմաներ ստեղծելուն։ Մենք տեսնում ենք, վոր մեր սոցիալիստական հասարակության առաջարժման յուրաքանչյուր քայլ բարելավում ե բանվորի ու վողջ աշխատավորության դրությունը։ Խորհրդային պետության հոգսն այժմ այն ե, վոր կարողանա ստեղծել նոր մարդ, վորը լինի Խորհրդային Միության արժանավոր քաղաքացի։

Նոր մարդու մշակմանն ուղղված բոլոր միջոցառումների մեջ կարեվորագույն տեղերից մեկը գրավում ե Փիզկուլտուրան։ Փիզկուլտուրան ակտիվ մասնակցություն ե ցույց տալիս մարդու մշակման հսկայական աշխատանքներին և հանդիսանում ե ԽՍՀՄ-ում սոցիալիզմ կառուցողների կոմունիստական դաստիարակության որդանական մի ողակը։ Խորհրդային Փիզկուլտուրայի խնդիրները ձևակերպված են ընկ։ Ստալինի հետեւյալ խոսքերում։

«Մենք պետք ե աճեցնենք բանվորների մի նոր սերունդ՝ առողջ, կենսուրախ, վոր ընդունակ լինի բարձրացնելու խորհրդային յերկը հզորությունն ու իր կրծքով պաշտպանելու նրան թշնամու հարձակումներից»։

Այսպիսով խորհրդային Փիզկուլտուրայի նպատակն ե աշխատավորության առողջացումը, նա աջակցում ե աշխատավորների քաղաքական դաստիարակությանը, խելացի հանգստի կազմակերպմանը. այդ ել հենց հանդիսանում ե դաստիարակումը նոր մարդու, վորը պատրաստ ե աշխատանքի, մեր սոցիալիստական աշխատանքին, պատրաստ ե պաշտպանելու իր պրոլետարական հայրենիքը։ Խորհրդային Միության բոլոր միջոցառումների կոմպլեքսում մեր Փիզիկական կուլտուրան նոր մարդու ստեղծման գործի հզոր լծակն ե։ Միայն բանվոր դասակարգն ե, վոր իշխանությունն իր ձեռքը վերցնելով ընդունակ ե կենսագործելու աշխատավորության առողջացումը։

Ֆիզկուլտ կազմակերպությունների առաջնական մեծ ու պատվավոր խնդիր ե դըրված—ամբողջ յեռանդով միանալ սոցիալիստական հասարակության շինարարության ընդհանուր գործին, վորպեսզի բանվոր դաստիարագի աշխատանքի ու կենցաղի հետ կապված բոլոր հարցերը լուծելով, կարողանանք լայնորեն ու խորությամբ ծավալել Փիզկուլտ աշխատանքի բազմատեսակ ու հետաքրքիր ձևերը, դրանով իսկ աջակցելով նոր մարդու ավելի արագ տեմպերով ստեղծմանը, վորն անհրաժեշտ ե մեր սոցիալիստական հասարակությանը։

ԱՍՀՄ-ի Փիզկուլտուրայի այս խնդիրները ձևակերպվել են Համ Կ(թ)Կ կենտկոմի 1925 թվի վորոշման մեջ։ Սակայն կուսակցության ԿԿ-ի այս վորոշումը Փիզկուլտ կազմակերպությունները կատարել են վոչ միանգամից։ Յեղել է ժամանակ, յերբ Փիզկուլտ կազմակերպությունները չեն կարողացել գտնել ճիշտ ուղին, այս իսկ պատճառով, կուսակցության ԿԿ-ը 1929 թվին իր վորոշման մեջ նշել է Փիզկուլտ շարժման անբավարար վիճակը, վորն արտահայտվել եր բանվոր դաստկարգի լայն մասսաների թույլ ընդգրկմամբ, ուեկորդամենական թեքմամբ, վարչական հակասություններով և այլն։

Մեր կուսակցության կենտրոնական կոմիտեն ընդգծել է հատկապես ուեկորդամենական թեքման վնասակարությունը, վորը լայնորեն դարդացել եր մեր Փիզկուլտ շարժման մեջ։ Ուեկորդամենական թեքման հիմնական հետեանքը յեղափ այն, վոր սպորտն ոժանդակ գործ լինելուց դարձափ ինքնանպատակ՝ սպորտը սպորտի համար։ Մասսայական ու դաստիարակչական աշխատանքը նետվեց մի կողմ, զոհ գնաց ուեկորդամոլության, վոչվոք չեր դեկավարում աշխատավորության մասսայական Փիզկուլտ ուսուցումը, վոչվոք այդ խնդրով չեր դրազվում։

Աշխատանքի այդ վիճակն առաջ բերեց շատ ցավալի հետևանքներ։ Մեր Փիզկուլտ

կազմակերպությունների շարքերը 1927-28 թ. ընթացքում վոչ միայն չաճեցին, այլև մինչև անգամ՝ սկսեցին նվազել։

Անցյալի սխալները չկրկնելու և ճիշտ աշխատանք տանելու համար պետք է պարզենք այն պատճառները, վորոնք Փիզկուլտ շարժումը հասցրին այդ վիճակին։

Առաջին պատճառը Փիզկուլտ կազմակերպությունների ապաքաղաքականությունն եր։ Նեկալարները չեյին հասկացել կուսակցության կենտկոմի միանգամայն պարզ ցուցմունքներն աշխատանքի քաղաքական բնույթի մասին։ Փիզկուլտուրային կազմակերպությունների ղեկավար ընկերները կարծում եյին, վոր Փիզկուլտուրան վոչ թե քաղաքականություն ե, այլ առողջացում և հանդստություն։ Այս տեսակետը խախտեց Փիզկուլտ շարժման հիմնական բովանդակությունը, վորն իր աշխատանքներում չի ունեցել քաղաքական պարզորոշ գիծ, չի կարողացել դառնալ մասսայական, պրոլետարական մի կազմակերպություն։ Դեռ ևս չջախջախված կապիտալիստական դասակարգի կողմից պրոլետարական պետության դեմ մղվող դասակարգացային ամենասուր պայքարի պայմաններում մասսայական մի կազմակերպության կողմից ցուցաբերվող ապաքաղաքականությունը՝ նշանակում եղութանքակություն դասակարգացային թշնամուն։

Հետևյալ պատճառը, վորը նպաստում եր Փիզկուլտ կազմակերպությունների անթափարար աշխատանքին, համարվում եր Փիզկուլտուրայի ճիշտ սիստեմի բացակայությունը։ Այն, ինչ մենք ունեինք Փիզկուլտուրայի խորհրդային սիստեմի մեթոդների բնագավառում 1925-29 տարիներում, ցույց ե տալիս այդ նույն սիստեմի բացարձակ անկարողությունը։ Նեկավարները Փիզկուլտ չարժման մեթոդական հարցերը համարում եյին տեխնիկական մի գործ և գցում եյին այսպես կոչված «մասնագետների» վրա։

Այսպիսով փաստորեն աշխատանքի ամբողջ մեթոդիկան գտնվում եր հին մասնագետներից բաղկացած մի խմբակի ձեռքը, վորոնք խորհրդային տեսք եյին տալիս բութուական հին, վատթարագույն տիպի տեսություններին։

Սիստերի յերկրորդ պատճառը կազմակերպության բութուական սկզբունքներն եյին։ Բութուազիայի մոտ Փիզկուլտուրայի կազմակերպությունները կցվում են ակումբներին։ Այս տերիտորիալ սկզբունքը դրվեց և մեր Փիզկուլտ չարժման հիմքում։ Այսպիսով ստեղծվեցին և սկսեցին առանց հսկողության աշխատել փաստորեն վոչփի չյենթարկվող սպորտ կազմակերպություններ, վորոնք կտրմած եյին պրոլետարական կազմակերպությունների ամբողջ սիստեմից։ Կազմակեր-

պական այդպիսի կառուցվածքն իհարկե նպատակահարմար եր, վորպեսզի ի մի հավաքեյին հակապրոլետարական բոլոր տարրերին և հնարավորություն տային նրանց անցկացնելու իրենց քաղաքականությունը Փիզկուլտ կազմակերպություններում։

Աշխատանքի դրվածքի վրա բացասական ազդեցություն եր ունենում նաև Փիզկուլտ կաղըերի բացակայությունը։ Աեփական պրոլետարական կաղըերի ստեղծման գործով վոչ վոք չեր գրադպում, գժվար եր այդ կաղըերն ստեղծել, քանի վոր չկար Փիզկուլտ աշխատանքի կնկրետ բովանդակություն։ Ի՞նչ սովորեցնեյին այդ կաղըերին—վոչվոք չդիտեր այդ։

Ահա այն հիմնական պատճառները, վորոնք արգելակում եյին փիզկուլտ չարժման դարգացումը։ Այդ պատճառներով կե 1929 թ. ընկ. Լ.Մ. Կազանովիչի ամենաակտիվ մասնակցությամբ իստագույն գնահատականը տվեց Փիզկուլտ չարժման դրության մասին և ցույց տվեց, թե ի՞նչպես պետք ե ուղղել աշխատանքները, ինչպե՞ս պետք ե վերակառուցել Փիզկուլտ կազմակերպությունները, վորպեսզի իսկապես հնարավոր լինի լրիվ կատարել նրանց առաջ դրված խնդիրները։ Այդ վորոշմամբ Համ. Կ(Բ)Կ կենտկոմը հանձնարարեց ԽՍՀՄ ԿԳԿ՝ նախագահության Փրակցիային՝ Կենտղործկոմին եից ստեղծել Ֆիզիկական

Կու լոտութայի Համամիութենական Խորհուրդ՝  
ԽՍՀ Միության պետական զեկավար մարմնի  
Փունկցիաներով։ Հանձնարարվեց սույն վո-  
րոշման համաձայն վերակազմել նաև տեղա-  
կան մ.կ. խորհուրդները դարձնելով վերջին-  
ներն վերպես Փիզկուլտ շարժումը զեկավարող  
պետական մարմիններ, վորոնք յենթարկվելու  
յեն ԽՍՀՄ ՖԿԴԽ-ին։

### III

Այդպիսով յենելով Փիզկուլտ շարժման  
առաջ դրված խնդիրերից և հաշվի առնելով  
անցյալի սխալները՝ անհրաժեշտություն ըդ-  
ուցվեց Փիզկուլտուրայի այնպիսի սիստեմ  
մշակելու, վորը հնարավորություն տար ամ-  
բողջ աշխատաքը դնելու քաղաքական գդալի  
բարձրության վրա, դարձնելու այն դասա-  
կարգայնորեն նպատակային, հասկանալի ու  
մատչելի սոցիալիզմի միլիոնավոր կառուցող-  
ներին։

Ֆիզիկական դաստիարակության մեր  
սիստեմն այնպես պետք է լինի, վոր յուրա-  
քանչյուր աշխատովոր հասկանա, թե ի՞նչ  
գործնական նպատակ է դնում իր առաջ Փիզ-  
կուլտուրայի կազմակերպությունը և ի՞նչպի-  
սի մասնակցություն պետք է ցուցաբերի ինքը  
առաջադրված այդ խնդիրների լուծման հա-  
մար։ Աշխատանքի մեթոդներն այնպես պետք  
ե լինեն, վորոնք հնարավորություն տան

Փիզկուլտուրայի անմիջական աշխատանքները  
կատարելով՝ զուգակցել այդ աշխատանքները  
ըանփոր դասակարգի ընդհանուր խնդիրներին,  
Փիզկուլտ կոլեկտիվը միացնելով կուսակցու-  
թյան ու իշխանության կողմից առաջադրված  
կարևորագույն կամպանիաներին ու միջոցա-  
ռումներին։

Խորհրդային Միության Փիզկուլտ շարժ-  
ման անհրաժեշտ եր մշակել պրոլետարիատի  
իր սիստեմը, վորը հնարավորություն տար  
կատարելու այն խնդիրները, վորոնք դրված  
են իր առաջ կուսակցության կկ կողմից։ Այդ  
սիստեմն իր արտօհայտությունը գտավ  
«պատրաստ աշխատանքի ու պաշտպանու-  
թյան» կոմպլեքսի մեջ։ «ՊԱՊ» կոմպլեքսը  
տալիս է մի շարի քննությունների նորմաներ-  
վագք, վոստյուն, լող, թիսվարում, մարմնի  
ձգում, նետում, հեծանիվ, ծանրությունների  
տեղափոխում, զահուկներ, ռազմա-սանիտա-  
րական գիտելիքների մինիմում և այլն։ ՊԱՊ-ի  
սիստեմը վճռում է հետեւյալ խնդիրները։

1. Աշխատավորության ֆիզիկական բազ-  
մակողմանի գարգացում և առողջացում։ Այս  
ձեռք է բերվում այն վարժությունների ընտ-  
րությամբ, վորոնցից կազմված ե կոմպլեքսը։

2. Նախապատրաստում աշխատանքի ու  
պաշտպանության։ Ֆիզիկապես բազմակող-  
մանիորեն դարձացած մարդու ավելի քան ա-  
ռողջ ու տոկուն լինելով՝ ավելի մեծ չափով ե

պատրաստված ամեն տեսակի աշխատանքի: Բացի այդ, կոմպլեքսի ցուցանիշներից մեկն ել հանդիսանում ե այն, վոր Փիզկուլտուրնիկն իր աշխատանքների մեջ պետք ե լինի որինակելի հարվածային: Ի լրումն այս բոլորի, մը-շակված և առավոտյան լիցքերի և արտադրության մեջ կատարվելիք Փիզկուլտ ընդմիջումների սիստեմ, վորոնք արդեն գործնականում կիրառվում են և հնարավորություն են տալիս Փիզիկական մինիմալ ուժերի վատնումով մաքսիմալ չափով բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը:

Պաշտպանության նախապատրաստումը ձեռք ե բերվում ինչպես Փիզիկական բազմակողմանի զարգացմամբ, նույնպես և կոմպլեքսի մեջ մտնող մի շարք ուազմակերարկելի ունակություններ յուրացնելով ինչպես հրաձություննե, հակադարձով ուղարկելու, նունակներ նետելու, մեխանիզմներ վարել (տրակտոր, ավտո, մոտոցիկլ) խոչընդուներ հաղթահրել և այլն:

Աշխատանքի ու պաշտպանության նախապատրաստումը ձեռք ե բերվում նաև Փիզկուլտուրնիկի քաղաքական ակտիվությունը բարձրացնելով: Ֆիզկուլտ աշխատանքների գուգակ ցումը տնտեսական, քաղաքական ամեն տեսակի կամպանիաներին՝ իր արտահայտությունն ե գտել եստաֆետներում, արտելքներում, զանազան տոնակատարություններում, ձեռնար-

կությունների արտադրական կյանքին ակտիվ մասնակցության ցույց տալու մեջ և այլն:

2-րդ աստիճանի «ՊԱՊ» կոմպլեքսը, բացի Փիզկուլտ շարժման բնագավառում յեղած դեմելիքներից Կարմիր սպորտինտերի գործունելություններից, սանմինիմումի անհրաժեշտ կատարումից, վորոնք սահմանված են առաջին կոմպլեքսով, Փիզկուլտուրնիկից պահանջում ե Փիզկուլտ կոլեկտիվում հասարակական ակտիվ աշխատանք կատարել:

Այս բոլորը նպաստում են Փիզկուլտուրնիկների քաղաքական ակտիվության բարձրացմանը, ընտելացնում նրանց հասարակական ոգտավեա աշխատանքի, մեր կազմակերպության ատամներին դարձնում իսկական Փիզկուլտուրնիկներ, պրոլետարական պետության քաղաքացիներ՝ այս բառի լավագույն իմաստով:

3. Կոմպլեքսը հնարավորություն ե տալիս ամենալայն չափով կազմակերպելու խելացի հանգիստը: Այս ձեռք ե բերվում սպորտի և սպորտային խաղերի բոլոր տեսակներու ծավալելով: Ֆիզիկական զարգացման մեր սիստեմի բնորոշ տարբերությունը բարձրացնութեալ սիստեմներից, բացի դասակարգայնորոլոր սիստեմներից, բացի դասակարգայնորեն նպատակային լինելուց, հանդիսանում ե նաև բազմակողմանի զարգացման համար կատարվող աշխատանքի զուգակցումն սպորտի ամենալայն ծավալման հետ: Վորպես ընդ-

Հանուր կանոն, բուրժուական ֆիզկուլտ  
կազմակերպությունները բաժանվում են  
յերկու խմբի՝ մարմնամարզական՝ ընդհա-  
նուր զարգացում ավող, և սպորտային խմբեր։  
Սրանք բոլորն ել ինքնուրույն գոյություն  
ունեն և մրցում են իրար հետ։ Բացի այդ,  
սպորտ կազմակերպությունները սովորաբար  
ավելի մեծ ծավալ ունեն և ավելի մեծ քանա-  
կությամբ անդամներ են ընդդրկում։ Ֆիզկուլտ  
կազմակերպությունների՝ իրարից անջատ  
գոյություն ունենալու հետևանքը լինում է  
այն, վոր սպորտային կազմակերպություն-  
ները չեն պարապում և չեն ել կարող պարապել  
իրենց անդամների ֆիզիկական առողջացման  
գործով, քանի վոր նրանց աշխատանքի հիմքը  
հանդիսանում է նեղ սպորտը՝ իրեն հատուկ  
ուեկորդամենական բոլոր յերեսույթներով, վո-  
րոնց արդյունքը լինում է վոչ այնքան ընդհա-  
նուր առողջացում, վորքան միակողմանի զար  
գացում, դրանով իսկ հաշմելով մարդկանց։

Իսկ մեր ՊԱՊ. սիստեմն իր մեջ միացնում  
է Փիզիկական բազմակողմանի զարգացումն  
ու սպորտի առանձին ձևերը։ Սպորտի տարրեր  
ձևերից գոյություն ունեցող սեկցիաները մի-  
աժամանակ զբաղվում են Փիզկուլտուրնիկնե-  
րին պատրաստելով քննությունների առանձին  
տեսակների նորմաները տալուն, մարզում  
են սպորտամեններին և կազմակերպում սպորտ  
մրցումներ։ Այսպիսով լրիվ միասնություն ե-

ստեղծվում Փիզիկական բազմակողմանի զար-  
գացման և սպորտի աշխատանքներում։

Մեր սիստեմը բաժանվում է յերկու կոմ-  
պլեքսի՝ առաջին և յերկրորդ աստիճանների։  
Առաջին աստիճանի կոմպլեքսը Փիզկուլտուր-  
նիկներին առաջադրում է զուտ մինիմալ պա-  
հանջներ։ Ֆիզիկապես առողջ մարդը, կանո-  
նավոր պարապմունքների դեպքում, մի տար-  
վա ընթացքում կարող ե բոլորովին ազատ  
կերպով տալ սահմանված բոլոր նորմաները։

Եերկրորդ աստիճանի կոմպլեքսը հիմնա-  
կանում պարունակում է քննության նույն  
ձևերը։ Մակայն կատարման տեխնիկայի տե-  
սակետից առաջադրում է ավելի բարձր պա-  
հանջներ և Փիզիկական ավելի մեծ պատրաս-  
տականություն։

Առաջին կոմպլեքսը կազմված է մատչելի,  
նկատի ունենալով, վոր այն պետք է տան  
լայն մասսաները։

Յերկրորդ կոմպլեքսը, վորպես իր կա-  
տարմամբ ավելի բարդ և դժվար կոմպլեքս,  
ներկայումս պետք է պատրաստի Փիզկուլտու-  
րայի հրամկազմ։ Յերբ մասսաներն առաջին  
կոմպլեքսին տիրապետեն, 2-րդ կոմպլեքսն ել  
պետք ե դառնա բոլոր Փիզկուլտուրնիկների  
սեփականություն։

Մեր Փիզկուլտ կազմակերպությունների  
վողջ աշխատանքները պետք է դրվեն այս խըն-

դիրներին համապատասխան ձևով։ Յերկու կոմպլեքսների սիստեմներն ել ընդգրկում են բոլոր կազմակերպությունները. արհմիությունների ինքնագործ շարժումը, կարմիր բանակը, «Դինամո»-ն, կոլտնտեսային գյուղը։ Քննությունների առանձին ձևերի նորմաները սահմանված են ըստ տարիքի, ուստի այդ նորմաները կարող են տալ վոչ միայն յերիտասարդները, այլև մեծահասակները։

«ՊԱՊ»-ի սիստեմն ընդգրկում է նաև դպրոցների բոլոր տեսակները։ Քննությունների առանձին տեսակների նորմաները դպրոցական ծրագրում բաժանված են ըստ տարիների։ Ցածր խմբակներում, մանկական տարիքի առանձնահատկությունները նկատի առնելով՝ սահմանվել են ամենատարրական յեղանակները, այնուհետեւ այդ յեղանակներն աստիճանաբար բարդանում են և 16-17 տ. հասակում, յոթնամյակը կամ իննամյակն ավարտելու ժամանակ, աշակերտությունն արդեն այնքան պատրաստված է լինում, վորագատ տալիս ե 1-ին կոմպլեքսով սահմանված բոլոր նորմաները։

Բուհերն ու տեխնիկումները, ինչպես Փիզիկուտ պարտադիր պարապմունքների կարգով, նույնպես և ինքնագործ կազմակերպությունների գծով պատրաստում են 2-րդ կոմպլեքսը տալու համար։

Ֆիզիկական բազմակողմանի գարգացումը խրախուսելու նպատակով կոմպլեքսի բոլոր նորմաները տվողներին ՊԱՊ-ի կրծքանշան է տրվում։

Առաջին կոմպլեքսի կրծքանշաններից մինչև որս բաց ե թողնված 550 հազար հատ։ Մոտ ապագայում կհաստատվի նաև 2-րդ աստիճանի կրծքանշանը։

Դպրոցականների Փիզիկուլտ պարապմունքները մեծապես խրախուսելու համար մշակվում են «Պատրաստ յեղիր աշխատանքի ու յերկրի պաշտպանության» հատուկ կոմպլեքս։ Այս կոմպլեքսի նորմաները տվողներին կտրվի հատուկ կրծքանշան, վորը պետք է հիշեցնին ՊԱՊ-ի կրծքանշանը։ Այսպիսով Փիզիկուլտուրայի այս սիստեմը յուրաքանչյուր աշխատավորի առաջ զնումը և միանդամայն կոնկրետ խնդիրները, վոր անհրաժեշտ է կատարել՝ խորհրդական ֆիզկուլտուրնիկ դառնալու համար։

Մասսաների մեջ «ՊԱՊ» կոմպլեքսի գաղափարներն ավելի արագ թափով արմատացնելու և նորմաները տալու դործի մեջ ավելի տեծ քանակությամբ աշխատավորներ ներգրավելու նպատակով մենք յուրաքանչյուր բանվորի պետք ե ընդառաջենք վոչ միայն կոմպլեքսով, այլ նաև սպորտի առանձին տեսակներով, նրանցից յուրաքանչյուրին ներգրավելով սպորտի այն տեսակի մեջ, վորը նրան ավելի յե հետաքրքրում։

Ֆիզկուլտ կազմակերպությունների ամբողջ աշխատանքների հիմքը պետք է լինի ուսուցումը։ Փիզկուլտ շարքերը մտնող յրուաքանչյուրին վրբը նոր և սկսում պարապել սպորտի այս կամ այն տեսակով, մենք պարտավոր ենք սովորեցնել ինչպես սպորտի տվայլ տեսակի տեխնիկային տիրապետելը, նույնպես և տվյալ տեսակում մարզգելու մեթոդները։

Միայն սիստեմատիկ ուսուցման միջոցով մենք կկարողանանք հետաքրքրություն արթնացնել դեպի աշխատանք, դեպի սպորտի առանձին տեսակի մեջ կատարելողործվելը, դեպի նորմաները ճիշտ տալը և Փիզկուլտ կուլտիվներին ակտիվ մասնակցելը։ Այսպիսով մեր վողջ աշխատանքներում հսկայական չափով անում ե սպորտի դերը։ Սպորտի միջոցով մենք վճռում ենք գործնական խնդիրներ—աշխատավորության ներգրավումը Փիզկուլտուրայի մեջ, ՊԱՊ-ի նորմաները տալու համար ուսուցանելու և սպորտ մբցումները կազմակերպելու գործը։

Աշխատանքի այս ամբողջ սիստեմը ճշտորեն լուծում ե Փիզկուլտ շարժման մեջ գոյություն ունեցող ռեկորդների և ռեկորդսմենների հարցը։ Միանգամայն պարզ է, վորինչքան շատ մեծանան Փիզկուլտուրնիկների շարքերը, վորքան լավ գրված լինի կոմպլեքսի և սպորտի առանձին տեսակների ուսուցումը, այնքան ավելի շատ ռեկորդներ և ռեկորդ-

սմեններ կունենանք։ Մրա մեջ վոչ մի վատ բան չկա։ Ուեկորդոմենականության վատ կողմնայն եր, վոր մասսաների ուսուցման փոխորեն, ամբողջ ուշադրությունն ուղղված եր առանձին ռեկորդսմեններ մարզելու վրա։ Մասսայական Փիզկուլտուրային աշխատանքների ճիշտ կազմակերպմամբ, Փիզկուլտուրնիկների ճիշտ ուսուցմամբ սահմանված ռեկորդը Փիզկուլտուրայի համար ագիտացիոն մի միջոց կհանդիսանա։ Յուրաքանչյուր տարի Փիզկուլտ կոլեկտիվների և Փիզկուլտուրնիկների համարապային շքերթի գծով անցկացվող կոնկուրս-ստուդատականները հանդիսանում են Փիզկուլտ առանձին կազմակերպությունների փոխադարձ մրցման ամենից ավելի ճիշտ ձեւը և նրանց կազմակերպվածության, կարգապահության ու մարտունակության մասսայական ստուգումը։

Փիզկուլտուրայի մեր սիստեմի ճշտության լավագույն ապացույցը հանդիսանում են այն 4 միլիոն մարդիկ (բացի գպրոցներից), վորոնք պարապում են կոմպլեքսի նորմաները տալու գործով, և այն 800 հազարը (առ 1-ն ու գուստոսի 1933թ.), վորոնք լրիվ տվել են կոմպլեքսի առաջին աստիճանի նորմաները։

Այս թվերն արգեն իրենք խոսում են իրենց մասին։ Անկասկած մենք այժմ ունենք մեծ նվաճումներ։

Նման արդյունքների մենք հասել ենք շը-

նորհիվ ճշտորեն կիրառվող գծի, չնորհիվ մեր աշխատանքներում արհմիութենական ու կոմյերիտական կազմակերպությունների կողմից գուցաբերված ակտիվ մասնակցության, չընորհիվ այն անխոնջ ու ամենորյա ղեկավարության, վոր հանդես են բերում կառավարությունն ու կառավարական մարմինները գեղի Փիզկուլտ շարժումը. և հատկապես չնորհիվ այն մեծ ոժանդակության և ուշադրության, վոր ցույց ե տալիս ընկ. Ստալինը, վորին Խորհրդային Միության Փիզկուլտուրնիկներն ամենյան իրավամբ համարում են իրենց լավագույն բարեկամը:

Խորհրդային Փիզկուլտ շարժման հզոր թափը պահանջում է սահմանել համապատասխան կազմակերպական ձեեր:

Այժմ Փիզկուլտուրային բոլոր կազմակերպությունները կառուցված են արտադրական սկզբունքով, միանգամայն համապատասխանելով հասարակական բոլոր կազմակերպություններին: Մակայն տվյալ շրջանում այս դեռ բավական չե, և մենք տեսնում ենք, թե ի՞նչպես Փիզկուլտ կազմակերպությունների աշխատանքներում հայտնաբերվում են մի շարք թերություններ: Դրանք հատկապես արտահայտվում են Փիզկուլտուրնիկների թույլ կարգապահությամբ, վորը կազմակերպական պարզորոշ ձեերի բացակայության արդյունք, և հանդիսանում:

